

**ՄԱՆԿԱԿԱՆ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԱԹՎԱԾ ՈՒՆԵՑՈՂ  
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
ՀԻՊՈԹԵՐԱՊԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ  
ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ**

*Թ.Յու. Ազարյան*

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու*

*Մ. Ա. Փարսադանյան*

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հատուկ կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի*

**Հանգուցային բառեր և արտահայտություններ.** մանկական ուղեղային կաթված, կենտոռնական նյարդային համակարգ, հիպոթերապիա, վերականգնում, հարմարվողականություն:

Մանկական ուղեղային կաթվածը (ՄՈՒԿ) կենտոռնական նյարդային համակարգի հիվանդություն է, որի ժամանակ ախտահարվում են գլխուղեղի շարժողական գոտիները և շարժումն իրականացնող ուղիները: Ախտահարվում է նաև կամային և ոչ կամային շարժումները կարգավորող մեխանիզմների փոխազդեցությունը: Մկանային կառավարման նման խանգարումը դժվարություններ է առաջացնում շարժման և մարմնին որոշակի դիրքի ժամանակ: Առաջին անգամ մանկական ուղեղային կաթվածի կլինիկական նկարագրությունը տվել է Վ. Լիտտլը 1853թ., իսկ Ջ. Ֆրոյդին պատկանում է ման-

կական ուղեղային կաթված եզրույթը:<sup>1</sup>

Մանկական ուղեղային կաթվածի հիմնական կլինիկական ախտանշան է շարժողական ֆունկցիայի խանգարումն է, որը կապված է զարգացման հապաղումով և ստատոկինետիկ սխալ զարգացումով, տոնուսի պաթոլոգիայի, թերլուծանքով: Բացի կենտոռնական նյարդային համակարգում տեղ գտած խանգարումներից կյանքի ընթացքում նյարդային և մկանային հյուսվածքներում, հողերում, կապերում, կրճիկներում առաջանում են նաև երկրորդային փոփոխություններ: Մանկական ուղեղային կաթվածի հիմնական ախտանշանին՝ շարժողական խանգարումներին

1 Стребелева Е. А., Венгер А. Л., Екжанова Е.А. и др., Специальная дошкольная педагогика, М.: Издательский центр «Академия», 2002., 94с.

շատ դեպքերում ավելանում են հոգեկանի, խոսքի, տեսողության, լսողության և այլ խանգարումներ: Շատ երեխաների մեջ դիտվում է նաև ցնցումային համախտանիշ:

Մի շարք հետազոտողների տեսությունների համաձայն՝ մանկական ուղեղային կաթվածի առաջացման համար վճռական դեր ունեն պրենատալ զարգացման գործոնները (37-60%) դեպքերում, նատալ գործոնների բաժինը (27-40%), իսկ պոսնատալը (3-25%), մինչդեռ որոշ հեղինակներ առանձնապես մեծ նշանակություն չեն տալիս մանկական ուղեղային կաթվածի էթիոլոգիայում: Ավելի մեծ նշանակություն են տալիս բարդություններով պայմանավորված ծննդյան գործոններին:

Վերը նշված պատճառներն ընդհանուր առմամբ, վերաբերվում են մանկական ուղեղային կաթվածին իսկ ավելի մանրակրկիտ դիտարկում կարելի է կատարել մանկական ուղեղային կաթվածի տարբեր ձևերի ուսումնասիրման ժամանակ, դրանք առանձնացվում են շարժողական տարբեր դիսֆունկցիաների համաձայն:

Համարվում է, որ մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների 25-35%-ի ինտելեկտը պահպանված վիճակում է, սակայն անբավարար պայմաններն իր ազդեցությունն են թողնում նրանց հոգեկան գործընթացի զարգացման վրա: Մանկական ուղեղային կաթվածով երեխաների բոլոր իմացական գործընթացներն ունեն որոշ առանձնահատկություններ. ակտիվ կամածին ուշադրության խանգարում, ինչը բացասաբար է անրադառնում երեխայի ողջ

հոգեկանի գործունեության վրա, քանի որ ընկալման խանգարումները հանգեցնում են ուշադրության խանգարման, բոլոր հոգեկան գործառույթների արագ հյուժվածություն, արտահայտվում է ցածր մտավոր աշխատունակությամբ, ուշադրության, ընկալման, հիշողության, մտածողության խանգարումներով, հուզական լաբիլությամբ: Մտավոր ծանրաբեռնվածության դեպքում արտահայտվում են նյարդային երկրորդային բարդացումներ: Երբեմն հոգեկանի ցայտուն հյուժվածությունը և հոգնածությունը նպաստում են անձի ախտաբանական զարգացմանը՝ առաջացնելով է երկչոտություն, վախեր, տրամադրության անկում և այլն:

Մանկական ուղեղային կաթվածի վերականգնման արդյունավետությանը նպաստող օժանդակ միջոցներից է հիպոթերապիան: Հիպոթերապիայի իրականացման ժամանակ ձիերին նախապես վարժեցնում են: Թերապիայից առաջ կենդանուն հետազոտում են հատուկ սարքավորումներով: Ընդ որում՝ նրանք պետք է լինեն ոչ ագրեսիվ և հեշտ կառավարելի:

Որպես հոգեբանական թերապիայի տարատեսակը հանդիսացող հիպոթերապիայի անցկացման ժամանակ ևս կիրառվում են մի շարք մեթոդներ, այցելուի և թերապևտի միջև զրույց է կազմակերպվում, պատմում են զվարճալի պատմություններ կենդանիների մասին (ձիու), կենդանակերպ տիկնիկներով ներկայացվում են տիկնիկային բեմադրություններ և զբոսանքներ:

Անգլիացի հոգեբան Հ. Ֆայնը գտնում է, որ կենդանիների մասին

պատմությունները դրական ազդեցություն են թողնում երեխային հոգեվիճակի վրա: Նրանք լսելով այդ պատմություններ՝ կտրվում են արտաքին աշխարհից, մոռանում իրենց անհանգստացնող ցավն ու երևույթները: Այնուհետև սկսվում են այդ պատմության հերոսների արաքների ակտիվ քննարկումներ, ներկայացվում են իրենց տեսակետները: Այսինքն մոտ տվյալ դեպքում ենթագիտակցորեն ձևավորվում է երեխաների ինքնավստահությունը:<sup>2</sup>

Հիպոթերապիայի կիրառման հիմնական ուղղություններն են՝

- Շարժողական գործառույթի խանգարման վերականգնումը նյարդային համակարգի ցանկացած մակարդակում (կաթված, ուշադրության կենտրոնացման խանգարում): Վնասվածքաբանության մեջ՝ ողնաշարի առանցքի և ողնաշարի գործառույթի այլ դեֆորմացիաներ:
- Մանկավարժական միջամտություն: Ձիախաղն ու ձիավարումը կիրառվում է նախադպրոցական ու դպրոցահասակ երեխաների վարքի խանգարման դեպքում, ինչպես նաև ինտելեկտի զարգացման նպատակով:
- Հաշմանդամների սպորտային գործունեությունը, որն օգնում է նրանց վերականգնվել և միշտ բարձր մակարդակի վրա պահել իրենց ֆիզիկական ակտիվությունը:
- Ձին՝ որպես կենդանի մարգասառք: Կենտրոնական նյարդային

համակարգի խանգարումով հիվանդների համար հիպոթերապիան կիրառվում է որպես բուժիչ-մարմնամարզություն:

- Հետվիրահատական ժամանակահատվածում հիվանդների վերականգնում, ինչպես նաև նրանց վերջույթներում արյան շրջանառության կարգավորումը,
  - Հոգեամատիկ շեղումներով երեխաների վերականգնում (նևրոզ, փսիխոզ, շարժումների զարգացման հապաղում): [3]
- ՄՈՒԿ-ով երեխաների հետ, հիպոթերապիայի իրականացումը՝
- նվազեցնում է վախի ու տագնապի զգացողությունը,
  - զարգացնում է երեխայի ինքնասպասարկման ունակությունը,
  - օգնում է երեխային շփման և հասարակության մեջ հարմարվելու հարցում:

Հիպոթերապիայի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ այն կազմակերպվում է բնության, այլ ոչ թե փակ տարածության մեջ: Ձիերը երեխայի գիտակցության մեջ ստեղծում են լրացուցիչ դրդապատճառություն, օգնում են հաղթահարելու վախերը, ու առաջացնում ձիու վրա նստելու և ձիավարելու ցանկություն: Այս ամենն ավելի դյուրին է դարձնում հասակակիցների հետ շփումը: Ձիու խնամքով զբաղվելու ժամանակ ձևավորվում ենք երեխայի պարտավորվածության ու պատասխանատվության զգացումները: Եթե երեխան ունի գլխուղեղի հետ կապված որևէ խանգարում, ապա պարզ և անընդհատ կրկնվող շարժումները նրան ընձեռում են ձիու խնամելով զբաղվելու հնարավորություն՝ ներգրավե-

2 Aubery H. Fine, *Animalassisted therapy*, 1999, 203p.

լով հասարակության մեջ, իր համար ստեղծելով նոր մասնագիտություն: Այդպիսով երեխան իրեն զգում է իբրև հասարակությանը պիտանի անձնավորություն: Հիպոթերապիան նաև շատ դրական է ազդում բացարձակ առողջ երեխաների գիտակցության զարգացման վրա: Ցանկացած երեխայի մոտ առաջանում է վախ, երբ իր առջև տեսնում է այդ ահռելի կենդանուն: Այդ վախն օգնում են հաղթահարել դժվարությունները այն երեխաներին, ովքեր անցնում են վերականգնողական թերապիա: Այս պարագայում երեխայի մեջ առաջանում է առաջինը լինելու բնազդը, նա դառնում է ավելի խիզախ, երբ տեսնում է, թե ինչպես է հիվանդ երեխան կարողանում կառավարել այդ հսկա կենդանուն: Նրանք՝ ամենալավը լինելու ցանկությունն օգնում է հաղթահարելու բոլոր վախերը:

Խումբը, որում իրականացվում է թերապիան, բաղկացած է երեք հոգուց՝ ինքը՝այցելուներ, հրահանգիչը և ձիավարը, ով գործում է ըստ հրահանգիչի կարգադրությունների: Վերջինս էլ, իր հերթին, ապահովության համար միշտ գտնվում է ձիու կողքին (նույնիսկ եթե հեծյալը ինքնուրույն է ձիավարում):[4]

Թերապևտիկ ձիավարությունը կարելի է բաժանել երեք մակարդակի՝ պայմանավորված ծանրաբեռնվածությամբ և նրանով, թե ինչ վիճակում է գտնվում երեխան:

Ավելի ծանր վիճակում գտնվող երեխաների համար կիրառվում է հիպոթերապիան: Երեխան երբեմն նստում է ձիու վրա՝ առանց թամբի: Թերապիան իրականացվում է մարդու(36,6°C) և ձիու(37,5-38,5°C)

մարմինների ջերմաստիճանների փոխազդեցության միջոցով, ինչպես նաև ձիու մարմնի ռիթմիկ տատանումներով:

Ավելի թեթև վիճակում գտնվողների դեպքում հիպոթերապիան կիրառում են միայն զարգացնող աշխատանքների սկզբնական փուլում, իսկ հետո սկսում են սովորել ինքնուրույն ձիավարելու կանոնները:

Երրորդ մակարդակը՝ ռայթերապիան է: Այն իրենից ներկայացնում է ձիարշավ, որտեղ ակտիվ ներգրավված են երեխաները: Լավ արդյունքների դեպքում նրանք կարող են մասնակցել մրցույթների և պարապել հատուկ ծրագրով:

Կա նաև այսպես կոչված թերապևտիկ ձիարշավ, որի հիմնական այցելուները մտավոր հետամնացություն ունեցող ու դժվար դաստիարակվող դեռահասներն են:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների դեպքում հիպոթերապիան նվազեցնում է վախի ու տագնապի զգացողությունը, հանում է նյարդային համակարգի լարվածությունը, նպաստում է այս երեխաների բարձր ինքնագնահատականի ձևավորմանը, հասարակության մեջ նրանց հարմարեցմանը:

Այսպիսով, հիպոթերապիան մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների համար ստեղծում է վերականգնման և սոցիալականացման լայն հնարավորություններ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Стребелева Е. А., Венгер А. Л., Екжанова Е.А. и др. Специальная дошкольная педагогика: М.: Издательский центр «Академия», 2002.
2. Aubrey Н. Fine- Animalassisted therapy, 1999.
3. <http://ppoterapia.kharkov.ua/poleznaya-informatsiya/16-osnovnyenapravleniya-ispolzovaniya-ippoterapii>
4. [http://ksk-rennaissance.ru/?page\\_id=2310](http://ksk-rennaissance.ru/?page_id=2310)

## РЕЗЮМЕ

### ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ И ФОРМЫ ПРОВЕДЕНИЯ ИППОТЕРАПИИ С ДОШКОЛЬНИКАМИ С ДЕТСКИМ ЦЕРЕБРАЛЬНЫМ ПАРАЛИЧОМ

Т. Ю. АЗАТЯН

*доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук*

М. А. ПАРСАДАНЯН

*магистр II курса факультета специального образования Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна*

В статье представлены основные проявления детского церебрально-го паралича (ДЦП), выявлены основные сопутствующие факторы, дана психолого-педагогическая характеристика этих детей. Выявлена эффективность проведения иппотерапии,

как средства коррекции детей с ДЦП. В ходе исследования становится ясным, что иппотерапия снижает чувства страха и тревожности, расслабляет нервную систему, способствует формированию самооценки у этих детей.

SUMMARY<sup>3</sup>

THE MAIN DIRECTIONS AND FORMS OF CARRYING OUT HIPPO THERAPY WITH PRE-SCHOOL CHILDREN WITH CEREBRAL PALSY

**T. Yu. Azatyan**

*Associate professor at the Chair of Special Pedagogy and Psychology  
Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of  
Pedagogical Sciences*

**M.A.Parsadanyan**

*Second course Master degree student, Special education faculty Khacatur Abovyan  
Armenian State Pedagogical University*

In article are presented the main manifestations of the children's cerebral palsy (CCP), the major contributing factors are revealed, is given the psychopedagogical characteristic of these children Revealed efficiency of hippotherapy as correction tool for

children with cerebral palsy. During the research it becomes clear that hippotherapy reduces sensation of fear and uneasiness, weakens of nervous system, promotes formation of a self-assessment of these children.

---

3 «Հատուկ կրթության հիմնախնդիրներ» գիտամեթոդական հանդեսի հոդվածների ամփոփումները անգլերեն լեզվով թարգմանել է հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Լիլիթ Ասոյանը